

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ


Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2010 թ. առաջին եռամսյակում

2010 թ. առաջին եռամսյակում ՀՀ տարածքում բանկային համակարգով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 2956 մլրդ դրամ (քանակը՝ 1642319), ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 2100 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 675826: 2010 թ. առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել է 12%-ով (283 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է 20%-ով (112982-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված փոխանցումների ծավալը 2009 թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 22%-ով (596 մլրդ դրամով), իսկ քանակը նվազել է 156826-ով (19 %-ով):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը (առանց բորսայական գործառնությունների) կազմել է մոտ 33 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 10560: Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված միջին օրական փոխանցումների ծավալը կազմել է 148 մլրդ դրամ (ավելացել է 52%-ով):

2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) ավելացել է Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումների տեսակարար կշիռը, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 44%-ը, քանակի 52%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել է 40%-ով (253 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 67170-ով (24%-ով): 2009 թ. չորրորդ եռամսյակի համեմատ այս վճարումների ծավալը նվազել է 26%-ով (307 մլրդ դրամով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



2010 թ. առաջին եռամսյակում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 106 մլրդ դրամի 2301660 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 7.6 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 1.7 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 0.5 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 1.2 մլրդ դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 612419, որը 2009 թ. չորրորդ եռամսյակի վերջի համե-

մատուցյալը ավելացել է 5.7%-ով (32988 քարտով): Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է քարտային գործառնությունների մոտ 7%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 16.5%-ով (1.1 մլրդ դրամով):

2010 թ. առաջին եռամսյակում առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական ստացումները նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 18%-ով¹ և կազմել 102 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը ավելացել է 22%-ով և կազմել 53 մլրդ դրամ: Արդյունքում՝ ֆիզիկական անձանց ուղղված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 49 մլրդ դրամ (նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 6 մլրդ դրամով):


Վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և միաժամանակ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև առևտրային բանկերի հետ համագործակցելու արդյունքում մատուցված ծառայությունների դիմաց հավաքագրված միջոցները կազմել են 5.2 մլրդ դրամ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԿԱՐԳ

2010 թ. առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 60%-ը, քանակի՝ 94.8%-ը: Էլեկտրոնային վճարումների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 28%-ով (275 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է 21%-ով (110705-ով): Առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային վճարումների համակարգով (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կատարված վճարումները կազմել են բանկերի վճարումների ծավալի մոտ 77%-ը (2009 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 33%-ով), իսկ քանակի՝ մոտ 99.6%-ը:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2009 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1730-ով՝ կազմելով 10015, իսկ ծավալը ավելացել է 4 մլրդ դրամով՝ կազմելով 19 մլրդ դրամ: Բորսայական գործառնությունների իրականացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում կատարված փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 148 մլրդ դրամ (ավելացել է 51 մլրդ դրամով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները (առանց բորսայական փոխանցումների)




¹ Հաշվի առնելով արտարժույթի փոխարժեքի տատանումները՝ հաշվարկված ցուցանիշները ԱՄՆ դոլարով արտահայտելիս (ըստ յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի) 2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց ուղղված դրամական ստացումները նախորդ տարվա համեմատ գրեթե պահպանել են նույն մակարդակը:

Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե պահպանվել է նույն մակարդակի վրա և կազմել է 2 մլն դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգով առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել է 1.9 մլրդ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.08%-ը, ծավալի 0.026%-ը (498 փոխանցում՝ 2.8 մլրդ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.07%-ը, ծավալի 0.025%-ը (458 փոխանցում՝ 2.7 մլրդ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված միջին օրական փոխանցումները



ՀԱՄԱԽԱՆՈՒ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՎԱՐԳ 2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված վճարումների ծավալի 32.81%-ը, քանակի 5%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծավալը նվազել է 48%-ով, իսկ քանակը ավելացել է 1%-ով):

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով*		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	Էլեկտրոնային*		Թղթային		Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ						
2009										
I եռ.	989806	530280	1333397	31860	59875	704	2383078	562844	6248937	4842
տեսակարար կշիռը վճարումներում (%)	41.54	94.21	55.95	5.66	2.51	0.13	100	100		
II եռ.	1260960	594690	1543120	31625	88900	924	2892981	627239	8021865	4499
տեսակարար կշիռը վճարումներում (%)	43.59	94.81	53.34	5.04	3.07	0.15	100	100		
III եռ.	2121563	679249	1410056	34893	154334	1044	3685953	715186	8675669	5429
տեսակարար կշիռը վճարումներում (%)	57.56	94.98	38.25	4.88	4.19	0.15	100	100		
IV եռ.	1617979	789849	927797	41912	150323	891	2696098	832652	9242227	5689
տեսակարար կշիռը վճարումներում (%)	60.012	94.86	34.41	5.03	5.58	0.11	100	100		
Ընդամենը	5990307	2594068	5214370	140290	453432	3563	11658110	2737921	32188698	20459
տեսակարար կշիռը վճարումներում (%)	51.38	94.75	44.73	5.12	3.89	0.13	100	100		

2010										
Լ եր.	1262858	640985	688950	33795	148297	1046	2100105	675826	9496297	4963
տեսակարար կշիռը վճարումներում (%)	60.13	94.84	32.81	5.00	7.06	0.15	100	100		

* Առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների:

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 528 փոխանցում՝ 11 մլրդ դրամ ծավալով (2009 թ. առաջին եռամսյակի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը նվազել է 10 մլրդ դրամով), իսկ մեկ թղթային փոխանցման միջին ծավալը նվազել է մոտ 21 մլն դրամով և կազմել է 20 մլն դրամ: Համախառն թղթային վճարումների համակարգով փոխանցումները հիմնականում վերաբերում են կնքված ռեպո գործառնությունների:

2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 4 մլրդ դրամ ծավալով 20 փոխանցում:

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵՐՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 5 գործակալ և 17 դիլեր բանկեր, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, «ՆԱՍԴԱՔ Օ-ԷՄ-ԷՔՍ-Արմենիա» ԲԲԸ-ն, մեկ ոչ բանկ

դիլեր, ՀՀ ֆինանսների նախարարությունը (պետական պարտատոմսերի թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով և կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի թողարկողի կարգավիճակով):

Համակարգի կողմից պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 454 հանձնարարական՝ մոտ 39 մլրդ դրամ ծավալով, ինչը 2009 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելի է 5 մլրդ դրամով (արժեթղթերի տեղաբաշխման հետ կատարված վճարումները ավելացել են 5.5 մլրդ դրամով, իսկ արժեթղթերի մարման հետ կապված վճարումները նվազել են 0.5 մլրդ դրամով): Ընդ որում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց մասնակիցների կողմից կատարվել է 18 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 21 մլրդ դրամի փոխանցում: Ընդ որում՝ «Գանձապետական պահառու» համակարգի միջոցով պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 375 մլն դրամի վճարում, որտեղ մոտ 66 մլն դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման և մոտ 309 մլն դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման հետ կապված գործառնություններ չեն իրականացվել:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված առք ու վաճառքի գործառնությունների դիմաց (առաքում՝ վճարման դիմաց սկզբունքով) իրականացվել է 109 մլրդ դրամի 592 փոխանցում: Նշված ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է 86 մլրդ դրամով: Համակարգի միջոցով կատարված ազատ առաքման գործառնությունները անվանական արժեթղթով կազմել են 202 մլրդ դրամ, իսկ գրավադրման հետ կապված գործառնությունները՝ 51 մլրդ դրամ:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 20 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 34 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 736: Այդ թվում՝ «ԱրՔա» վճարային քարտերի սպասարկումը իրականացվում է 677 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրված POS - տերմինալների ընդհանուր քանակը կազմել է 2815, որից 446-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 25:

77 տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող (սպասարկող) քարտերի տեսակները


Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնեսբանկ	+	+	+		
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+			
Ամերիաբանկ	+	+	+		
ՎՏԲ-Հայաստան բանկ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
ԲՏԱ բանկ	+	+			
Զարգացման հայկական բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+	+	+		+
Ինելիքբանկ	+	+			
Սելլաթ բանկ	+				
Բիբոս բանկ Արմենիա	+	+			
ԷյՋ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ բանկ	+	+	+	+	
Արցախբանկ	+	+			
Կասկադ բանկ	+	+			
Առէկսիմբանկ-Գազպրոմբանկ	+	+	+	+	
Յունիբանկ	+	+	+		
Արդշինինվեստ բանկ	+	+	+		
Արմսվիսբանկ					
ՊրոԿրեդիտ բանկ			+		

2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը նախորդ եռամսյակի վերջի համեմատ ավելացել է 3.5%-ով (9926 քարտով) և կազմել 292090: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակը ավելացել է 7.8%-ով (23062 քարտով). VISA-ն ավելացել է 4.3%-ով (8647 քարտով) և կազմել 210236, իսկ MasterCard-ը՝ 25.8%-ով (15769 քարտով) և կազմել 76877: Միջազգային այլ քարտերի քանակը նվազել է 3.9%-ով (1354 քարտով):

Քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2009 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 25%-ով (21.3 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 28%-ով (508197):

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 1128175 գործառնություն՝ 43 մլրդ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է մոտ 38%-ով (12 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 44%-ով (345052-ով):

«ԱրՔա» քարտերի զարգացման դինամիկան



VISA քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 39 մլրդ դրամ (689353 գործառնություն), իսկ MasterCard-ով իրականացվել է 14.6 մլրդ դրամ ծավալով 279803 գործառնություն: VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2009 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 26.9%-ով (8 մլրդ դրամ), MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալը՝ 9.6%-ով (1.3 մլրդ դրամ), իսկ միջազգային այլ քարտերով իրականացվել է 204329 գործառնություն՝ 9 մլրդ դրամ ծավալով, որը ավելի է 1.5 մլրդ դրամով:


Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում)

Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	քանակը	այդ թվում՝ «ԱրՔա» քարտերով ծավալը (մլն դրամ)	քանակը
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	84457	1981253	37425	994462
այդ թվում՝ անկանխիկ	497	12904	33	5726
POS – տերմինալների/ինպրինտերների միջոցով	20384	258898	5542	106901
այդ թվում՝ անկանխիկ	5416	159118	2055	55002
Ինտերնետ միջավայրում	1691	61772	501	26812
Ընդամենը	106532	2301923	43468	1128175
այդ թվում՝ անկանխիկ	7604	233794	2589	87540

2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված գործառնությունների միջին օրական ծավալը կազմել է 1183 մլն դրամ, իսկ քանակը՝ 25574: Գործառնությունների միջին օրական քանակը 2009 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 28%-ով (5647-ով), իսկ ծավալը՝ 25%-ով (236 մլն դրամով):

ՀՀ տարածքում մեկ վճարային քարտով իրականացված ամսական կանխիկացման գործառնությունների ծավալը կազմել է մոտ 50 հազ. դրամ, իսկ անկանխիկը՝ 4 հազ. դրամ, (քանակը համապատասխանաբար կազմել է 1.1 և 0.1), որը 2009 թ. առաջին եռամսյակի համեմատ պահպանվել է նույն մակարդակի վրա:

ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2006 - 2009 թթ., ինչպես նաև 2009 - 2010 թթ. եռամսյակների ընթացքում



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը անդամակցում են 17 միջազգային դրամական փոխանցումների համակարգերի:

Դրամական փոխանցումների իրականացման համակարգերը

Համակարգեր	Մասնակից բանկերի քանակը	Մասնակից կազմակերպությունների քանակը	Մասնաբաժինը ստացումների ծավալում, %
UNISTREAM	1		44.08
ANELIK	9	1	9.12
CONTACT	8	2	8.97
MIGOM	12	2	8.45
BISTRAYA POCHTA	12	1	4.24
MONEY GRAM	16	1	6.32
LIDER	8	1	2.32
INTEREXPRESS	3	1	2.19
ZLOTAYA CORONA	4	1	8.24
BLIZKO	4	2	1.86
BTF-Sauz	1		0.74
FASTER	1	1	0.48
ALLUR	4		0.40
AVERS	2		0.09
XPRESS MONEY	1		0.04
INTEL EXPRESS	1		0.67
RIA MONEY TRANSFER	2	1	0.80
MONEY TUN	-	1	0.13
COINSTAR MONEY TRANSFER	1	1	0.34
STEFI	-	1	0.50

2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում այս համակարգերին մասնակից առևտրային բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 69 մլրդ դրամ (քանակը՝ 319336), որը 6.1 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Նշված համակարգերով ստացված միջոցների ծավալը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 17 մլրդ դրամով: Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 216 հազ. դրամ. նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 28 հազ. դրամով:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են 4.7%-ով (1.5 մլրդ դրամով) և կազմել մոտ 32 մլրդ դրամ, իսկ մեկ վճարման ծավալը կազմել է 1.8 մլն դրամ, որը գրեթե պահպանվել է նույն մակարդակում: Միաժամանակ, բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումները արտասահման կազմել են 42 մլրդ դրամ. նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 17%-ով (6 մլրդ դրամով):

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով (SWIFT-ի, տելեքսի, ֆաքսի միջոցով) Հայաստանի Հանրապետություն կատարված համախառն փոխանցումների ծավալը 2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 693 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 35629 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 19 մլն դրամ (նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել է 27%-ով):

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 10 վճարահաշվարկային կազմակերպություններ, որոնցից 3-ը իրավունք ունեն իրականացնելու միայն դրամական միջոցների փոխանցում, 6-ը՝ վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և, միաժամանակ, դրամական (փողային) փոխանցումներ:

Դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով ապահովում են արտասահմանից ՀՀ ուղղված վճարումների իրականացումը: Այդ կազմակերպությունները հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 1 մլրդ դրամի վճարում, այդ թվում՝ 0.9 մլրդ դրամի վճարումը կատարվել է միջազգային դրամական փոխանցումների իրականացման համակարգերին անդամակցելու միջոցով, իսկ արտասահման կատարվել է 0.1 մլրդ դրամի փոխանցում: Հաշվետու ժամանակահատվածում դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել է՝ արտասահման փոխանցումները՝ 0.2%, իսկ արտասահմանից ստա-

ցումները՝ 1%: Այս կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը կազմել է 93 հազ. դրամ: Ընդ որում՝ դրամական փոխանցումների իրականացման համակարգերով մեկ վճարման միջին ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 2 հազ. դրամով:

Վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և, միաժամանակ, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող 6 կազմակերպություններ ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների միջոցով մատուցում են հանրային նշանակություն ունեցող ծառայությունների դիմաց կանխիկ միջոցներով վճարումների ընդունման ծառայություններ: Նշված վճարահաշվարկային կազմակերպությունները ինքնասպասարկման տերմինալներով հավաքագրում են բնակչությանը մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարները մոտ 33 կազմակերպությունների համար: 2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ տեղադրված են 690 ինքնասպասարկման տերմինալներ, որոնց միջոցով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 4.8 մլրդ դրամի (1459797 գործառնություն) միջոցների հավաքագրում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նշված ծավալը ավելացել է 58%-ով:

Բացի այդ, որոշ վճարահաշվարկային կազմակերպություններ պրոցեսինգային, քլիրինգային ծառայություններ են մատուցում 9 առևտրային բանկերի: Այդ առևտրային բանկերը, համագործակցելով վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, իրականացրել են կոմունալ ծառայությունների դիմաց միջոցների հավաքագրում՝ գրանցված 109 դրամարկային կետերի միջոցով: Վերջիններիս կողմից հավաքագրված միջոցների ծավալը կազմել է 0.3 մլրդ դրամ (49394 գործառնություն): 2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից բացվել է 22 մասնաճյուղ, որտեղ միջոցների հավաքագրումը նույնպես կատարվում է դրամարկային կետերի միջոցով: Վճարահաշվարկային կազմակերպությունների դրամարկային կետերի միջոցով կատարվել է 313602 գործառնություն՝ 1.6 մլրդ դրամ ծավալով:

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը քարտերի սպասարկման սարքավորումների միջոցով ապահովել է 89 մլրդ դրամ ծավալով քարտային գործառնությունների պրոցեսինգ (2009 թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 30%-ով ավելի), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացվել է 3.7 մլրդ դրամի գործառնություն, իսկ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով՝ ՀՀ այլ բանկերի պրոցեսինգային կենտրոնների միջոցով (այդ թվում՝ նաև արտասահմանում) իրականացվել է 9 մլրդ դրամի գործառնություն: